ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 փետրվարի 2026 թվականի N 186-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 1566-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի «Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1566-Ն որոշումը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Մինչև 2026 թվականի հունվարի 1-ը նշանակված՝ մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի վճարումը շարունակվում է սույն որոշմամբ սահմանված կարգով:

4. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, Հայաստանի Հանրապետության

պետական պահպանության ծառայության, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի (այսուհետ՝ համապատասխան մարմիններ) ղեկավարներին՝ համագործակցելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հետ ապահովել մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի նշանակման և վճարման գործընթացում թվային տվյալների փոխանակումը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության հետ՝ ծրագրային գործիքի միջոցով:

5. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ ապահովել մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի նշանակման և վճարման գործընթացի՝

1) ինքնաշխատ եղանակով իրականացման ծրագրային գործիքի մշակումն ու ներդրումը՝ մինչև 2026 թվականի սեպտեմբերի 1-ը.

2) իրականացման համար անհրաժեշտ թվային տվյալները համապատասխան մարմինների հետ փոխանակելու ծրագրային գործիքի մշակումն ու ներդրումը, այդ թվում՝ դրա հասանելիության ապահովումը համապատասխան մարմիններին՝ «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի միջոցով՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 1-ը:

6. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին և Ազգային անվտանգության ծառայության տնօրենին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգից երեխայի (ում խնամքի կապակցությամբ նշանակվում է մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը)՝ Հայաստանի Հանրապետության սահմանը հատելու մասին տեղեկատվությունը ստուգելու գործընթացի ծրագրային գործիքի մշակումն ու ներդրումը՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 1-ը:

7. Սահմանել, որ մինչև սույն որոշման՝

1) 5-րդ կետի 1-ին ենթակետում նշված՝ երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի նշանակման և վճարման գործընթացի ինքնաշխատ եղանակով իրականացման ծրագրային գործիքի ներդրումն առցանց ներկայացված դիմումի (տվյալների) հիման վրա մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը նշանակվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոն ներկայացված դիմումի համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1566-Ն որոշման հավելվածով սահմանված կարգով.

2) 5-րդ կետի 2-րդ ենթակետում նշված՝ համապատասխան թվային տվյալները փոխանակելու ծրագրային գործիքների ներդրումը Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1566-Ն որոշման հավելվածի՝

ա. 27-րդ կետում նշված դիմումը ծնողը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոն, որին կցում է այդ կետում նշված տվյալներով համապատասխան մարմնի տված տեղեկանքը՝ ստորագրված և կնքված գործատուի կնիքով,

բ. 31-րդ կետում նշված տեղեկատվությունը համապատասխան մարմինը տրամադրում է ծառայությանը՝ այդ կետում նշված հանգամանքներն առաջանալու օրվան հաջորդող 15 օրվա ընթացքում.

3) 6-րդ կետում նշված՝ ծրագրային գործիքի ներդրումը երեխայի կողմից Հայաստանի Հանրապետության սահմանը հատելու մասին տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգից ստացվում է հարցման միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

19.02.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ